



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<17>> 12 2012թ. N: 182 ք.Գյումրի

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի թիվ 626-Ն որոշմամբ հաստատված <<Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգի>> 10-րդ և 11-րդ կետերի դրույթները՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի Մուսայելյան ճանապարհի վերանորոգման /Սպանդարյան ճանապարհից մինչև Տերյան ճանապարհ/ աշխատանքները ընդունելու նպատակով ձևավորել ավարտված շինարարության օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահ Ալբերտ Մարգարյանին՝ սահմանված ժամկետում և կարգով կազմել ավարտված շինարարության օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտը և ներկայացնել հաստատման:

Ա.ԳԻԶԻՐՅԱՆ



Հավելված  
ՀՀ Շիրակի մարզպետի  
2012 թվականի 02/17 ի  
N 182 կարգադրության

Կ Ա Ձ Մ  
ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ալբերտ Մարգարյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ՝ նախագահ,

Անդամներ՝

Խաչատուր Խնձրցյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ,

Ռուբեն Ղազարյան - Քաղաքաշինական պետական տեսչության Շիրակի տարածքային բաժնի գլխավոր մասնագետ - քաղաքաշինական պետական տեսուչ,

Արամ Ադամյան - <<Մերձմոսկովյան>> բաց բաժնետերական ընկերության տնօրեն,

Անատոլի Դոգուզով - <<Երանգ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն,

Անուշավան Հարությունյան - <<Հայկասար>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն,

Կնյազ Մանասյան - Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ:

ՀՀ Շիրակի մարզպետարանի  
աշխատակազմի ղեկավար՝

Խ. Պողոսյան